Մարզպետական եկամուտներ-2009

Գևորգ Հայրապետյան, ԻԱԿ իրավաբան

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2010 թվականի օգոստոսի 20-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմեց ՀՀ Պետական եկամուտների կոմիտե՝ ՀՀ պաշտոնյաների գույքի եւ եկամուտների հայտարարագրերում ներառված տվյալների մասին տեղեկանքներն ստանալու համար: Հարցումն ուղարկելուց 5 օր անց ԻԱԿ-ը Պետեկամուտների կոմիտեից ստացավ ՀՀ բոլոր մարզպետների գույքի եւ եկամուտների հայտարարագրերում ներառված տվյալների մասին տեղեկանքները: Չտրամադրվեցին միայն Վայոց Ձորի մարզպետ Սերգեյ Բագրատյանի տվյալները, քանի որ նա մարզպետի պաշտոնը զբաղեցնում է 2010 թ.-ից, իսկ մինչ այդ եղել է “Սերգեյ գրուպ” ՍՊԸ-ի խորհրդի նախագահ եւ գույքի եւ եկամուտների հայտարարագիր չի ներկայացրել: Շիրակի մարզպետ Աշոտ Գիզիրյանը 2009թ.-ի ընթացքում զբաղեցրել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի պաշտոնը, իսկ Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայստանի փրկարար ծառայության տնօրենի պաշտոնը, ուստի նրանք գույքի եւ եկամուտների հայտարարագիր ներկայացրել են վերոնշյալ պաշտոնները զբաղեցնելու ժամանակ ստացած եկամուտների վերաբերյալ:

2009թ.-ի ընթացքում ամենաշատ եկամուտը ստացել է Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանը, ում եկամուտը կազմել է 3.764.690 դրամ: 2009թ.-ին ամենաքիչ եկամուտն ունեցել է Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը: 2009թ.-ին նա ունեցել է 2.282.160 դրամ եկամուտ: Ի դեպ, Էդիկ Բարսեղյանը եկամուտը 1.482.530 դրամով ավելի է, քան մարզպետների շրջանում 2009թ.-ի ընթացքում ամենաքիչ եկամուտն ունեցած Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանի ցուցանիշը՝ 2.282.160 դրամ: Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանին հաջորդում է Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը՝ 3.088.000 դրամ եկամուտով:

Մնացած բոլոր մարզպետներից յուրաքանչյուրի եկամուտների չափը չի գերազանցում 3 մլն դրամը: ՀՀ բոլոր մարզպետները միասին 2009թ.-ի ընթացքում ունեցել են 24.248.296 դրամ եկամուտ: Ինչպես 2008թ.-ին, այնպես էլ 2009թ.-ին գույքի եւ եկամուտների հայտարարագրեր ներկայացրած բոլոր մարզպետների եկամուտները միասին վերցրած զիջում են նախարարների շրջանում ամենաշատ եկամուտը ստացած Առողջապահության նախարար Հարություն Քուշկյանի ստացած եկամուտին (341.615.000 դրամ): Սակայն եթե 2008թ.-ին մարզպետների եկամուտները Հարություն Քուշկյանի եկամտին զիջում էին ավելի քան 5 անգամ, ապա 2009 թ.-ին մարզպետների եկամուտը նախարարի եկամտից ավելի քան 14 անգամ էր պակաս: Նշենք, որ Հարություն Քուշկյանի եկամուտը, 2008թ.-ի համեմատ քիչ է փոխվել,

այսինքն, ոչ թե նախարարն է հարստացել, այլ մարզպետներն են բոլորը միասին վերցրած աղքատացել:

2008թ.-ի համեմատ 2009թ.-ին հարստացած կամ աղքատացած մարզպետները. 2008թ.-ին պաշտոնավարած 10 մարզպետներից 2009թ.-ին իրենց պաշտոնում մնացել եւ մարզպետի պաշտոնի համար գույքի եւ եկամուտների հայտարարագրեր ներկայացրել են 7-ը: Համեմատենք այդ 7 մարզպետների եկամուտների փոփոխությունը 2008-2009թ.թ.-ի ընթացքում.

- 2008թ.-ին ամենաշատ եկամուտն (35.070.600 դրամ) ունեցած Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը 2009թ.-ին ամենաշատ եկամուտը ստացած մարզպետների ցուցակում երկրորդն է՝ 3.088.000 դրամ եկամուտով: Նրա եկամուտը 2008թ.-ի համեմատությամբ պակասել է ավելի քան 11 անգամ:
- 2008թ.-ին ամենաքիչ եկամուտն (2.074.713 դրամ) ունեցած Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը 2009թ.-ի ընթացքում ստացել է 2.401.328 եկամուտ՝ բարելավելով նախորդ տարվա իր ցուցանիշը 326.615 դրամով:
- 2009թ.-ի ընթացքում ամենաքիչ եկամուտն ունեցած Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանի եկամուտն ավելացել է ընդամենը 12.000 դրամով՝ 2008թ.-ի 2.270.160 դրամից 2009թ.-ին դառնալով 2.282.160 դրամ:
- Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանի եկամուտը 2009թ.-ին ավելացել է 87.038 դրամով՝ 2.407.058 դրամից դառնալով 2.494.096 դրամ:
- Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի եկամուտը 2009 թ.-ին նվազել է 16.105 դրամով՝ 2.747.794 դրամից դառնալով 2.731.689 դրամ:
- Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի եկամուտը 2009 թ.-ին ավելացել է 26.333 դրամով՝ 2.268.000 դրամից դառնալով 2.294.333 դրամ:
- Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանի եկամուտը 2009 թ.-ին նվազել է 504.000 դրամով՝ 2.882.000 դրամից դառնալով 2.378.000 դրամ: